ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 13

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Գետահովիտ համայնքի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-022-0637-0002 կադաստրային ծածկագրով 0.045 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության անտառների հողեր	11-022-0637-0002 կադաստրային ծածկագրով 0.045 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
2. ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված պայմանը՝ ջրընդունիչ համակարգ կառուցելու դեպքում կազմակերպությունը պետք է դիմի շրջակա միջավայրի նախարարություն՝ օրենքով սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Գետահովիտ համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 13 » «հունվարի» 2022թ